

3044



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«17» 03 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 062 - 25

Նախաձեռնող՝

«ԱՎ Կոմպանի» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտաս 60/2

Գործունեությունը՝

Նոր Գյուղ և Կոտայք բնակավայրերի միջնակարգ
դպրոցի կառուցում
Կոտայքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 062 - 25
« 17 » Մարտի 2025թ.

Նոր գյուղ և Կոտայք բնակավայրերի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «ԱՎ Կոմպանի» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Կատեգորիա Բ կատեգորիա
Տեղադրման վայրը՝ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, Կոտայք բնակավայր

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ «ԱՎ Կոմպանի» ՍՊԸ-ի կողմից Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կոտայք բնակավայրի վարչական տարածքում նախատեսվում է կառուցել Նոր Գյուղ և Կոտայք բնակավայրերի համար միջնակարգ դպրոց (հզորությունը՝ 576 աշակերտ):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Ակունքի համայնքապետարանի կողմից տրամադրված 2024թ. դեկտեմբերի 19-ի N 158 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով գրանցված (կադաստրային ծածկագիր՝ 07-038-0042-0010) պետական սեփականություն հանդիսացող 1.5 հա հողամասի սահմաններում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նկարագրական մաս. Հետազոտվող տեղամասը տեղադրված է Կոտայքի մարզի Կոտայք գյուղի վարչական տարածքում, գյուղի հարավ-արևելյան կողմում, Կոտայք և Նոր գյուղ բնակավայրերի միջանկյալ հատվածում: Տարածքը կառուցապատված չէ, ծառաթփային բուսականություն տարածքում առկա չէ: Հողատարածքի հարևանությամբ գտնվում են բնակելի տներ (12-48 մ), մանկապարտեզի շենք (20 մ), հողամասեր (20 մ):

Համաձայն ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության օբյեկտի ֆունդիական տեսակետից տարածքը գտնվում է միջին բարձրության սարավանդի վրա, ուղիղ հարթ է, նիշերի տատանումը մինչև 1 մ: Գրունտներն արտահայտված են ճապարակ-կոպճային

ջրահագեցվածությամբ: Տեղամասը գնտվում է ՀՀ կլիմայական շրջանցման չափավոր տաք կլիմայական, II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ, 9 բալ սեյսմակայունությամբ: Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները բացակայում են:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին, որոնք հորատանցքերով մինչև 15.0 մ խորությունը չեն բացահայտվել, ըստ հրատարակված գրականության տվյալների ստորգետնյա ջրերը տեղադրված են 30.0 մ խորը: Հորատման աշխատանքների ընթացքում, ճալաքարա-կոպճային գրունտների շերտին հարող մասերում և թիվ հորատանցքում 8.0-9.0 մ միջակայքերում դիտվել են խիստ խոնավացած տեղամասեր, որոնք ձևավորվել են տեղամասի արևելյան մասով անցնող ջրատարից ներթափանցող ջրերի հաշվին: Սելավատարից ջրերի հոսքը տարածք կանխելու համար նախատեսվել է կրթահամալիրի ցանկապատի նշված հատվածի հիմքը կառուցել անհրաժեշտ խորության և համապատասխան ջրամեկուսացում ապահովել:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքում բնության և (կամ) պատմամշակութային հուշարձաններ և հատուկ պահպանվող տարածքներ, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չկան:

Նոր դպրոցի կառուցման նպատակն է աշակերտների ուսուցումը կազմակերպել անվտանգ, բարձր սեյսմակայունություն ունեցող, բարեկարգ, նոր չափորոշիչներով կառուցված շենքում:

Դպրոցի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

- ✓ հողամասի ընդհանուր մակերես - 15106.45 մ²,
- ✓ կառուցապատման մակերես - 3656.87 մ² (24.20 %),
- ✓ անջրանցիկ մակերես - 4946.03 մ²,
- ✓ կանաչապատման մակերես - 6490.84 մ² (42.96 %),
- ✓ կրթահամալիրի ընդհանուր մակերես - 9926.9 մ²,
- ✓ շինարարական ծավալ - 51366.36 մ³,
- ✓ դպրոցի հզորությունը - 576 աշակերտ / 26 դասարան:

Դպրոցը բաղկացած է 5 մասնաշենքից, որոնք տարանջատված են սեյսմիկ կարաններով:

1-ին մասնաշենքը եռահարկ է: 1-ին հարկում տեղակայված են գլխավոր մուտքը, ճաշարանն իր օժանդակ սենյակներով: 2-րդ հարկում նախատեսված է հանդիսությունների սրահը, որը ելքեր ունի նաև 2-րդ հարկ:

2-րդ և 3-րդ մասնաշենքերը եռահարկ են: Մասնաշենքերի 1-ին հարկերում տեղակայված են տարրական դասարանների դասասենյակները: Մյուս հարկերում՝ բարձր դասարանների դասասենյակները, բուժկետը, հոգեբանի և լոգոպեդի սենյակները, խաղասենյակը, հանգստի սենյակը և այլն:

4-րդ մասնաշենքը եռահարկ է: 1-ին հարկում տեղակայված են մարզական գույքի և հանդերձարանների սենյակներ, ինչպես նաև՝ սանհանգույցներ: 2-րդ հարկում նախատեսված են գրադարան-ընթերցասրահ և նկարչության համար խմբասենյակ, իսկ 3-րդ հարկում՝ ստուդիաներ:

5-րդ մասնաշենքում տեղակայված է դպրոցի մարզադահլիճը:

Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է բացօդյա մարզադաշտ (778.59 մ²) և մարզահրապարակ (300.22 մ²):

Դպրոցի տարածքում նախատեսվող ջերմոցը (32 մ²) տեղադրվելու է դպրոցի արևելյան հատվածում, որն օգտագործվելու է բնագիտական առարկաների գործնական դասընթացների համար:



Ջրի մաքրման կայանը (տիպը՝ Topas-40 21, հզորությունը՝ 5.2 մ³/ժամ), տեղադրվելու է տարածքի հարավային մասում, որն ըստ իր թողունակության բավարարում է կրթահամալիրի հզորությանը: Սարքավորումը կատարում է եռաստիճան մաքրում: Մաքրված ջրերը ֆիլտրացում անցնելուց հետո ուղղորդվելու են դեպի մաքրված ջրի կուտակման և հեռացման հոր, այնուհետև՝ տարածքի արևելյան սահմանի երկայնքով անցնող սելավատար: Ավելցուկային ջրերի հեռացման համար նախատեսվել է նաև դրենաժային համակարգ 15.0 մ խորությամբ Ø160 մմ, որի մեջ տեղադրվելու է պոլիէթիլենային խողովակ:

Ջերմամատակարարումն իրականացվելու է տարածքում կառուցվող կաթսայատնից (42.65 մ²)՝ 2 մուտքագծով, բնական գազով: Հողամասի սահմանագծով անցնող գազի մատակարարման խողովակի պահպանման գոտում որևէ շինարարական աշխատանքներ չեն իրականացվելու:

Շինությունների տանիքներին տեղակայվելու է 96.28 կՎտ (մոտ 689 քմ) դրվածքային հզորության արևային ֆոտովոլտային համակարգ՝ որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է թվով 166 հատ միաբյուրեղային 580 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից:

Հողատարածքի հարավային հատվածում տեղադրվելու է մակերեսով 180 կՎտ հզորության լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան (17.6 մ²): Էլեկտրամատակարարումն իրականացվելու է 2 մալուխային գծերով:

Ջրամատակարարման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին՝ նախատեսվող գործունեության իրականացման համար տրամադրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված իրականացվելու է արտաքին կոնստրուկցիաների և օդատարների ջերմամեկուսացում, օդորակման բարձր արդյունավետության համակարգի կիրառում և այլն:

Շենքն ապահովված են լինելու արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, հակահրդեհային միջոցներով՝ կրակմարիչներով, էլեկտրամատակարարման և ծխահեռացման փականների ավտոմատ անջատիչներով, օդափոխության, հակածխային օդափոխության արտածման համակարգերով, ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էներգախնայող բազմաթիվ այլ սարքավորումներով, էվակուացիոն ուղիներով և ելքերով և այլն:

Հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ (թեքահարթակներ, սանհանգույցներ և այլն):

Շինարարության տևողությունը կազմում է 24 ամիս կամ 624 օրացուցային օր:

Նախապատրաստական փուլում կատարվելու են շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով, էլեկտրամատակարարում և ջրամատակարարում, շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում, գիշերային լուսավորվածության ապահովում: Հիմնական փուլում իրականացվելու է շինարարություն՝ ըստ ժամանակացույցի:

Շինարարության ընթացքում տեխնիկա-տրնսպորտային միջոցներից օգտագործվելու են էքսկավատոր, բուլդոզեր, աշտարակային կոունկ, բետոնախառնիչ, ավտոինքնաթափ, ձեռքի գործիքներ և այլն: Հողային աշխատանքներն իրականացվելու են HOWO էքսկավատորով, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Շինարարական նյութերից օգտագործվելու են նրբաթրեմոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվառ, երեսապատման բարձրորակ



նյութեր և այլն: Արտադրական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են, իսկ բաց տարածքներում տեղադրվելու են տակդիրների վրա՝ չգերազանցելով բարձրության նորմերը, սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը, որից արտադրական հրապարակի ընդհանուր մակերեսը կազմելու է 500 մ², որտեղ պահեստավորվելու և կայանվելու են շինանյութերը և շինտեխնիկան, տեղադրվելու են ժամանակավոր շինությունները և այլն: Հողային և ջրային ռեսուրսների պահպանության նպատակով շինտեխնիկայի վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված սպասարկման կետերում: Շինհրապարակում տեղադրվելու է մեքենաների անիվների լվանալու հարթակ:

Շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան, որը տեղադրվելու է շինարարական հրապարակին կից (25 մ³ ծավալով տարողություն): Պարզարանում տեղի է ունենալու մեխանիկական նստեցում, և պարզեցված ջուրն օգտագործվելու է արտադրական հրապարակի ջրցանման և մեքենաների անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը հեռացվելու է որպես շինադբ:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Հողային զանգվածն առաջանալու է մասնաշենքերի հիմքերի փորման և անհրաժեշտ ենթակառուցվածքների համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային աշխատանքների ժամանակ հողային հանույթը կազմելու է 26113,0 մ³, հետլիցքը՝ 7800 մ³: Հետլիցքի ենթակա հողային զանգվածը կպահպանվի շինհրապարակում, փոշենստեցման համար պարբերաբար կիրականացվի ջրցան:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային չտեսակավորված աղբն է (բացառությամբ խոշոր եզրաչափերի, 120 մ³) և շինարարական աղբը՝ (650 մ³): Շինարարության փուլում առաջանալու են նաև այլ թափոններ, մասնավորապես՝ սև և գունավոր մետաղի ջարդոններ, յուղոտված ավազ, եռակցման խարամ և այլն: Շինարարական աղբը, այդ թվում փորման աշխատանքների ընթացքում վտանգավոր նյութերով չաղտոտված 18313 մ³ հողային զանգվածը, տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Կենցաղային աղբը հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից՝ պայմանագրային հիմունքներով՝ բացառելով տարածքում աղբի կուտակումը և այրումը:

Ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի / հողի (գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում՝ հրդեհաշիջման համար:

Խմելու որակի ջուրը կմատակարարվի տարաներով պայմանագրային հիմունքներով: Անիվների լվացման, ջրցանի, բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել ըստ համայնքի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Հաշվետվությամբ նախատեսված բնապահպանական միջոցառումների իրականացման դեպքում՝ շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը չի գերազանցի օրենսդրությամբ սահմանված նորմերը:



Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար տեղադրվելու են ժամանակավոր կառույցներ՝ ապահովելով շինհրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմաններ և այլն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքի կանաչապատումն իրականացվելու է Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման համապատասխան՝ համաձայնեցված Ակունքի համայնքապետարանի հետ:

Իրականացվելու է 6490.84 մ² մակերեսով կանաչապատում՝ ծառատնկման և սիզամարգերի միջոցով: Տնկվելու են՝ կաղնի (13 հատ), լորենի (4 հատ), հացենի (19 հատ), կուսախաղող հնգատերև՝ հողամասի եզրագծով: 2700 մ³ ծավալով հողի բերրի շերտի հանումը և պահպանումը, ինչպես նաև կանաչապատման նպատակով պահեստավորված բուսահողը չբավարարելու դեպքում բուսահողի ձեռքբերումն իրականացվելու է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումն իրականացվելու է ցնցուղային եղանակով: Օգտագործվելու են ռետինե խողովակներ՝ ոռոգումն ամբողջությամբ կազմակերպելու համար:

Հաշվետվությունում ներկայացվել է նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները: Մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու / նվազեցնելու նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ:

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ:

3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. ՀՀ դրամ, ամբողջ շինարարության ընթացքում՝ 700 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Դպրոցը կառուցվելու և շահագործվելու է գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է չկառուցապատված տարածքում, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության փուլում լինելու են կառավարելի և կրելու են կարճատև բնույթ:

Փորձաքննական գործընթացին մասնակել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Կոտայքի մարզպետարանը, Ակունքի համայնքապետարանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և անաջադիտությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Ակունք համայնքի Կոտայք և Նոր գոյղ բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերում իրականացվել են հանրային



լսումներ, նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել հավելյալ միջոցառումներ:
2. Նախատեսվող շինարարական աշխատանքները կատարել՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի և հասարակական շենքերի տարածքներում աղմուկի մակարդակը և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
3. Թափոնների, ներառյալ վտանգավոր թափոնների կուտակումը, հեռացման ձևը, եղանակը, ինչպես նաև աղբավայրում տեղադրումն իրականացնել համապատասխան գործող իրավական ակտերին և համաձայնեցված տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
4. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել՝ համաձայնեցված Ապարանի համայնքապետարանի հետ՝ ապահովելով Հաշվետվությամբ ամրագրված բարեկարգման և կանաչապատման լուծումները:
5. Բետոնի տեղափոխումն իրականացնել Հաշվետվությամբ նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Ավ Կոմպանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր գյուղ և Կոտայք բնակավայրերի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ, առաջատար մասնագետ՝

Աստղիկ Վարդանյան